ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՍՏԻ

«14» հունվար 2025 թ.

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք

Ժողովի մասնակիցներ.

1) Մերուժան Մելիքսեթյան - հանձնաժողովի նախագահ,
2) Աննա Զոբանյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3) Արմեն Նալբանդյան - հանձնաժողովի անդամ,
4) Ռոզա Նալթակյան - հանձնաժողովի անդամ,
5) Հասմիկ Խաչատրյան - հանձնաժողովի անդամ,
6) Էմիլ Ղուկասյան - հանձնաժողովի անդամ,
7) Ստեփան Հակոբյան - հանձնաժողովի անդամ,
8) Արմեն Հակոբյան - հանձնաժողովի անդամ,
9) Գոռ Հակոբյան - հանձնաժողովի անդամ,
10) Վարդան Ներսիսյան - հանձնաժողովի անդամ,
11) Հովհաննես Սարգսյան - հանձնաժողովի անդամ,
12) Արաքսյա Արաբյան - հանձնաժողովի անդամ,
13) Հովհաննես Մարուքյան - հանձնաժողովի անդամ,
14) Ալվարդ Սարգսյան - հանձնաժողովի անդամ,
15) Գայանե Սարգսյան - հանձնաժողովի քարտուղար,
16) Արմեն Շմավոնյան – հանձնաժողովի աշխատանքներին աջակցող:

Օրակարգ.

Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով սուբվենցիայի տեսքով ֆինանսական միջոցներ ստանալու համար Աբովյան համայնքում սկսել համապատասխան գործընթաց:

Քննարկվելու են գործընթացի կազմակերպման կարգը և ծրագրի իրականացման հետ կապված հարցերն, ինչպես նաև իրազեկման մեթոդները և ժամանակացույցը:

Լսեցին.

1. **<u>Հանձնաժողովի նախագահ Մերուժան Մելիքսեթյանին</u>**, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակները և համայնքի կողմից ընդունված գործընթացին վերաբերող իրավական ակտերը:

   Նշվեց որ համաձայն ժամանակացույցի մեկնարկել է իրազեկման փուլը, որի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել հանդիպումներ համայնքի բնակիչների հետ վարչական բնակավայրերում, ՀՈԱԿ-ներում, հանդիպումներ կրթական հաստատություններում՝ քոլեջների ուսանողների հետ, ՔՀԿ-ների հետ, ԼՂ-ից բռնի տեղահանված և Աբովյան համայնքում բնակություն հաստատած անձանց հետ:

   Մեր խնդիրն է ապահովել քաղաքացիների ակտիվ ներգրավվումը:

2. **<u>Հանձնաժողովի նախագահի տեղակալ Աննա Զոբանյանին:</u>**

   Նա ներկայացրեց ԳՄՀԸ և Արմավիր ՀԿ համատեղ մշակած իրազեկման պլանը, որով անհրաժեշտ է առաջնորդվել:

3. **<u>Հանձնաժողովի անդամ Արմեն Նալբանդյանին:</u>**

   Ով պատասխանեց ներկաներին հուզող հարցին՝ քվեարկության կազմակերպման և ընթացքի վերաբերյալ:

4. **<u>Հանձնաժողովի անդամ Ռոզա Նալթակյանին:</u>**

   Ով նշեց, որ բնակիչների շրջանում կոտրվել է այն կարծրատիպն, որ իրենց ձայնը լսելի չէ և անհրաժեշտ է ավելի ակտիվ կերպով նրանց մոտիվացնել մասնակցելու համայնքի խնդիրների լուծմանը:

   Խոսեց հայտարարությունների տեղադրման և դրանց տարածման մասին:

Առաջարկներ.

1. **<u>Հանձնաժողովի անդամ Հասմիկ Խաչատրյան.</u>**

   Առաջարկեց համայնքի պաշտոնական կայքում տեղադրել գրացման քայլերի հաջորդականությունը ցուցադրող հոլովակ:

2. **<u>Հանձնաժողովի անդամ Ալվարդ Սարգսյան.</u>**

   Առաջարկեց համայնքի գլխավոր փողոցի վրա գտնվող թվով երկու խելացի կանգառների գովազդային վահանակների վրա տեղադրել ծրագրին վերաբերվող հայտարարություն:

Որոշվեց.

1. Սկսել իրազեկման գործընթաց հաստատված ժամանակացույցին համապատասխան:
2. Աբովյան համայնքի պաշտոնական կայքում և վարչական տարածքներում տեղադրել հայտարարությունը:
3. Կազմակերպել հանդիպումներ խոշորացված համայնքի 1 քաղաքային և 7 գյուղական բնակավայրերում, ՀՈԱԿ-ներում, հանդիպումներ կրթական հաստատություններում՝ քոլեջների ուսանողների հետ, ՔՀԿ-ների հետ, ԼՂ-ից բռնի տեղահանված և Աբովյան համայնքում բնակություն հաստատած անձանց հետ:

Ժողովի նախագահ՝ _____ Մերուժան Մելիքսեթյան
ստորագրություն

Ժողովի քարտուղար՝ _____ Գայանե Սարգսյան
ստորագրություն

Ժողովի մասնակիցներ՝

	Աննա Չոբանյան
	Արմեն Նալբանդյան
	Ռոզա Նալթակյան
	Հասմիկ Խաչատրյան
	Էմիլ Ղուկասյան
	Ստեփան Հակոբյան
	Արմեն Հակոբյան
	Գոռ Հակոբյան
	Վարդան Ներսիսյան
	Հովհաննես Սարգսյան
	Արաքսյա Արաբյան
	Հովհաննես Մարուքյան
	Ալվարդ Սարգսյան
	Արմեն Շմավոնյան